# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կարիքների համար ***ցանցի արդիականացման համար ցանցային փեխնիկայի և համակարգիչների*** ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԲՏԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-2025/16» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«24» սեպտեմբերի 2025թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Լիլիթ Մանուկյան՝** Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գործերի կազմակերպման վարչության պետ

*հանձնաժողովի անդամներ՝*

**Բենիկ Վարդանյան՝** Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության Գործերի կազմակերպման վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների սպասարկման բաժնի պետ

**Տիգրան Հակոբյան՝** Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ֆինանսատնտեսագիտական վարչության ֆինանսաբյուջետային բաժնի պետ

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Օֆելյա Ասատրյան՝** Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գնումների բաժնի գլխավոր մասնագետ

**1. Տեղեկություն՝ «ԲՏԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-2025/16» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.**

1.1 հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել ընթացակարգի հայտարարությունը և հրավերը eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) հրապարակվելու օրվանից հաշված 14-րդ օրվա (22.09.2025թ.) ժամը 10:00-ն,
1.2 հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,
1.3 էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 23.09.2025թ., ժամը 10:00-ին:

**2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքների գների վերաբերյալ.**

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գինը՝ մեկ թվով արտահայտված.

| Չափաբաժնի համարը | Գնվելիք ապրանքի անվանումը | Գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքի գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Ցանցային բաժանարար (Firewall ) Հրեպատ | 8 700 000 |

| | | |
|---|---|---|
| 2 | Ցանցային բաժանարար | 9 600 000 |
| 3 | Դյուրակիր համակարգիչ | 10 500 000 |

**3. Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով, հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝**

| N | Մասնակցի անվանումը (անունը) | Մասնակցի էլ. փոստի հասցեն |
|---|---|---|
| 1 | ԱԷՅ ՍՊԸ | tender.companion@gmail.com, |
| 2 | ՄԽԻԹԱՐՅԱՆՍ ՊԼՅՈՒՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ | mkhitaryangnumner@gmail.com, |
| 3 | Նովենտիք ՍՊԸ | armenia@noventiq.com |
| 4 | Ամազոն Իմպորտ ՍՊԸ | amazonimportllc@gmail.com |
| 5 | Յպարտ Քաղաքացի ՍՊԸ | hpartqaxaqaci@gmail.com, |
| 6 | Էյչ Գրուպ ՍՊԸ | eychgroup@gmail.com, |
| 7 | ՆԵՔՍԱ ՍՊԸ | yerevan332@gmail.com, |
| 8 | Բրենդ քոմփյութերս ՍՊԸ | info@brandcomputers.am, |

**4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.**

Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի համաձայն՝ մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը գնահատող հանձնաժողովի քարտուղարին հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հիմնավորումներ չեն ներկայացվել:

**5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ ստացված հարցումների և տրամադրված պատասխանների մասին.**

Հայտերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել, հետևաբար պատասխաններ չեն տրամադրվել:

**6.«ԲՏԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-2025/16» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները:**

Հակադարձ աճուրդի արդյունքները ներկայացված են կից ֆայլով:

**7. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի /դիմում-հայտարարությունների/ առկայության մասին.**

-**Ամազոն Իմպորտ ՍՊԸ-ի և ՆԵՔՍԱ ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**8. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

---

-**Ամազոն Իմպորտ ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտում առկա փաստաթղթերը կազմված են հրավերի պայմաններին համապատասխան և գնահատվում են բավարար:

**ՆԵՔՍԱ ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտում /չափաբաժին 3/ **առաջարկվող ապրանքի** տեխնիկական բնութագիրը կազմված է հրավերի պահանջներին անհամապատասխան և գնահատվում է անբավարար::

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**Հանձնաժողովը որոշեց**

Հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց՝

- մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել **ՆԵՔՍԱ ՍՊԸ-ին,** մինչև կասեցման ժամկետի ավարտը **/սեպտեմբերի 25-ը ներառյալ/** շտկել հայտում առկա անհամապատասխանությունը՝ այն է

***-ընկերությունն ունի արդյոք 2 վենդորի կողմից լիազորված սերվիս կենտրոնի առկայություն, Վենդորի կողմից տրամադրված MAF-ի պարտադիր առկայություն:***

***Միաժանակ խնդրում եմ շտկված փաստաթուղթը էլեկտրոնային ստորագրված տարբերակներով նաև ներկայացնել քարտողարի*** ofelya.asatryan@hti.am *պաշտոնական էլեկտրոնային փոստին:*

- հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել **2025թ. Սեպտեմբերի 26-ին, ժամը 10:00-ին:**

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**Հանձնաժողովի քարտուղարին.**

Համակարգի միջոցով ծանուցել **ՆԵՔՍԱ ՍՊԸ-ին**՝ առաջարկելով մինչև նիստի կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի՝

Նախագահ

______________________ **Լիլիթ Մանուկյան**

Անդամներ

______________________ **Բենիկ Վարդանյան**

______________________**Տիգրան Հակոբյան**

Քարտուղար՝

______________________ **Օֆելյա Ասատրյան**

---

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3**

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2025թ. կարիքների համար ***ցանցի արդիականացման համար ցանցային տեխնիկայի և համակարգիչների*** ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԲՏԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-2025-16» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «26» սեպտեմբերի 2025թ.

ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Լիլիթ Մանուկյան՝** Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գործերի կազմակերպման վարչության պետ

*հանձնաժողովի անդամներ՝*

**Բենիկ Վարդանյան՝** Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության Գործերի կազմակերպման վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների սպասարկման բաժնի պետ

**Տիգրան Հակոբյան՝** Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ֆինանսատնտեսագիտական վարչության ֆինանսաբյուջետային բաժնի պետ

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Օֆելյա Ասատրյան՝** Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գնումների բաժնի գլխավոր մասնագետ

**1. Տեղեկատվություն՝ «ԲՏԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-2025-16» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ՆԵՔՍԱ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանության շտկման և հայտերի գնահատման արդյունքների վերաբերյալ.**

**ՆԵՔՍԱ ՍՊԸ-ն** հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել են հայտերում արձանագրված անհամապատասխանությունները: Մասնակցի կողմից շտկված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում են բավարար:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:*

2. ***Տվյալներ՝ ընտրված մասնակցի վերաբերյալ.***

---

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը ***որոշեց.***

-1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել **Ամազոն Իմպորտ ՍՊԸ**-ին,

-3-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել **ՆԵՔՍԱ ՍՊԸ**-ին,

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:*

3. **Հանձնաժողովը որոշեց գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, իրավերով սահմանված կարգով ընտրված մասնակցի հետ կնքել համապատասխան պայմանագիրը:**

Հանձնաժողովի՝

Նախագահ

____________________ Լիլիթ Մանուկյան

Անդամներ

____________________ Բենիկ Վարդանյան

____________________ Տիգրան Հակոբյան

Քարտուղար՝

____________________ Օֆելյա Ասատրյան